

5.23. Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ 2010 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2010թ. վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ կազմել են 263.9 հազ. տ, որի 63.1%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտին, 36.9%-ը՝ արտանետման անշարժ աղբյուրներին:

5.23.1. Արտանետման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ: Արտանետման անշարժ աղբյուրների քանակը 2010թ. կազմել է 3349, որոնց 84.1%-ն ունեցել են սահմանային թույլատրելի հաստատված չափորոշներ: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 259.3 հազ. տ, որի 62.4%-ը որսվել է, մնացած 37.6%-ը՝ արտանետվել մթնոլորտ: Հանրապետության մեկ բնակչի հաշվով արտանետումները կազմել են 30.0 կգ, հանրապետության տարածքի (առանց Սևանա լճի հայելու մակերեսի) մեկ քառ. կմ-ի հաշվով՝ 3.4 տ:

Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերը և դրանց շարժն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2010թ.

տոննա

	Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը	Որսված վնասակար նյութերի քանակը	Մթնոլորտային արտանետումների քանակը
ք.Երևան	22798.9	3481.2	19317.7
Արագածոտն	280.3	-	280.3
Արարատ	138844.7	137429.8	1414.9
Արմավիր	95.1	-	95.1
Գեղարքունիք	395.4	-	395.4
Լոռի	34796.4	-	34796.4
Կոտայք	39133.3	20720.0	18413.3
Շիրակ	378.0	-	378.0
Սյունիք	7170.8	198.8	6972.0
Վայոց ձոր	75.2	-	75.2
Տավուշ	15381.5	-	15381.5
Ընդամենը ՀՀ	259349.6	161829.8	97519.8

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի 27.4%-ը կազմել է ծծմբային անհիդրիդը (26.7 հազ. տ), 2.4%-ը՝ ածխածնի օքսիդը (2.3 հազ. տ), 1.0%-ը՝ ազոտի օքսիդները՝ առանց ենթօքսիդի (1.0 հազ. տ): Ծանր մետաղների գումարային քանակը մթնոլորտային արտանետումներում կազմել է 29.9 տ: Մթնոլորտ արտանետված փոշու քանակը կազմել է 3445.2 տ, որի 14.0%-ը (482.3 տ) բաժին է ընկել օրգանական փոշուն: Ցնդող օրգանական միացությունների քանակը մթնոլորտային ընդհանուր արտանետումներում կազմել է 560.1 տ:

Մթնոլորտային տեսակարար արտանետումներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2010թ.

	Արտանետումները	
	մարզի մեկ բնակչի հաշվով, կգ ¹	մարզի մեկ քառ. կմ հաշվով, կգ ¹
ք.Երևան	17.3	85100.0
Արագածոտն	2.0	101.8
Արարատ	5.1	675.0
Արմավիր	0.3	76.6
Գեղարքունիք	1.6	97.0
Լոռի	123.5	9183.5

¹ Առանց Սևանա լճի հայելու մակերեսի:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Արտանետումները	
	մարզի մեկ բնակչի հաշվով, կգ	մարզի մեկ քառ. կմ հաշվով, կգ ¹
Կոտայք	65.5	8814.4
Շիրակ	1.3	141.0
Սյունիք	45.6	1547.3
Վայոց ձոր	1.3	32.6
Տավուշ	114.4	5688.4
Ընդամենը ՀՀ	30.0	3425.3

5.23.2. Մթնոլորտային արտանետումներն ավտոտրանսպորտից: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2010թ. կազմել է 166.4 հազ. տ: Դրանց մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել ածխածնի օքսիդը՝ 121.1 հազ. տ կամ ընդհանուր արտանետումների 72.8%-ը, ցնդող օրգանական միացությունները՝ 29.5 հազ. տ կամ 17.7%, ազոտի օքսիդները՝ 15.3 հազ. տ կամ 9.2%:

Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը, 2006-2010թթ.

տոննա

	2006	2007	2008	2009	2010
Ազոտի օքսիդներ	12831.0	13829.0	15620.0	14414.0	15256.0
Ցնդող օրգանական միացություններ	26156.0	26442.0	30425.0	28494.0	29464.0
Ածխածնի օքսիդ	105469.0	108772.0	125471.0	116960.0	121135.0
Մուր	485.0	521.0	550.0	508.0	563.0
Կապար	1.2	0.8	1.0	0.9	0.9
Ծծմբի երկօքսիդ	113.0	95.0	88.0	30.0	32.0
Ընդամենը	145055.2	149659.8	172155.0	160406.9	166450.9